ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

«ՎԱՐՁԿԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՄ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման և ուսուցման դեմ» 1990 թվականի Միավորված ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) միջազգային կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) առաջին միջազգային գործիքն է, որը պատասխանատվության մեխանիզմներ է նախատեսում վարձկանների հավաքագրման և օգտագործման համար: Կոնվենցիան սահմանում է վարձկանների հավաքագրումը, օգտագործումը, ֆինանսավորումը կամ ուսուցումը որպես հանցագործություն:

Կոնվենցիան ամրագրում է «վարձկան» հասկացությունը՝ նշելով անհրաժեշտ նախապայմանները, որոնց առկայության պարագայում անձը համարվում է վարձկան: Կոնվենցիայի 1-ին հոդվածը, ընդլայնելով 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների առաջին լրացուցիչ արձանագրության (այսուհետ՝ Առաջին լրացուցիչ արձանագրություն) 47-րդ հոդվածի սահմանումները, ամրագրում է, որ վարձկան է համարվում ցանկացած անձ, ով՝

ա) հատուկ հավաքագրվել է տեղում կամ արտերկրում՝ զինված հակամարտության շրջանակներում մարտնչելու համար, *բ)* շահագրգռված է մասնակցելու ռազմական գործողություններին՝ առաջնորդվելով գլխավորապես մասնավոր օգուտ ստանալու ցանկությամբ, և որին հակամարտության կողմի կողմից կամ վերջինիս անունից փաստացի խոստացվել է այդ կողմի զինված ուժերում համանման կոչում ունեցող և գործառույթներ իրականացնող կոմբատանտներին խոստացվող կամ վճարվող գումարից էականորեն բարձր նյութական փոխհատուցում, *գ)* հակամարտության կողմի քաղաքացի չէ և ոչ էլ հակամարտության կողմի կողմից վերահսկվող տարածքում բնակվող անձ է, *դ)* հակամարտության կողմի զինված ուժերի անդամ չէ և *ե)* չի ուղարկվել հակամարտության կողմ չհանդիսացող պետության կողմից որպես իր զինված ուժերի անդամ՝ կատարելու ծառայողական պարտականություններ:

Կոնվենցիայի նպատակն է «վարձկանություն» հանցագործության համար քրեական պատասխանատվություն սահմանել և խթանել վարձկանության որպես եղեռնագործ հանցագործության վերացմանը, ինչպես նաև պահպանել ՄԱԿ-ի կանոնադրությամբ նախատեսված սկզբունքներն ու նպատակները:[1]

«Վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման և ուսուցման դեմ» 1989 թվականի կոնվենցիան ստորագրել է 17 պետություն. այն ուժի մեջ է 36 պետության համար: Ադրբեջանի Հանրապետության համար Կոնվենցիան ուժի մեջ է մտել 1997 թվականի դեկտեմբերի 4-ից:

Կոնվենցիան նախատեսում է հետևյալ հիմնական դրույթները.

- Կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ պետությունները պարտավորվում են չհավաքագրել, չօգտագործել, չֆինանսավորել կամ չուսուցանել վարձկաններին միջազգային իրավունքով ճանաչված՝ ժողովուրդների ինքնորոշման անքակտելի իրավունքի իրավաչափ իրականացմանը հակադրվելու նպատակով, ինչպես նաև, միջազգային իրավունքի համաձայն, պարտավորվում են անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել այդ նպատակով վարձկանների հավաքագրման, օգտագործման,

[1] Վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման և ուսուցման դեմ կոնվենցիայի նախաբան // https://guide-humanitarian-law.org/content/article/3/mercenaries/:

ֆինանսավորման կամ ուսուցման կանխարգելման համար: Հարկ է նկատել, որ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը 2019 թվականի սեպտեմբերի 26-ի 42/9 բանաձևով խստորեն դատապարտել է վարձկանների օգտագործումը ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացումը խոչընդոտելու նպատակով՝ վարձկանների արարքները համարելով հանցագործություն և սպառնալիք անվտանգությանը, խաղաղությանն ու մարդու իրավունքներին:[2]

- Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, որը հավաքագրում, օգտագործում, ֆինանսավորում կամ ուսուցանում է վարձկանների, կատարում է Կոնվենցիայով նախատեսված հանցագործություն:
- Կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ Կոնվենցիայով սահմանված հանցագործության հանցափորձը, ինչպես նաև Կոնվենցիայով սահմանված հանցագործության կատարմանը կամ կատարման փորձի հանցակցությունը նախատեսված են որպես հանցագործություն:
- Կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ կոնվենցիայով սահմանված հանցագործության կատարման կամ կատարման հնարավորության վերաբերյալ տեղեկատվության առկայության պարագայում, համապատասխան տեղեկությունները ստանալուց անմիջապես հետո Կոնվենցիային միացած պետություններն իրավունք ունեն անմիջականորեն ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի միջոցով համապատասխան տեղեկությունները փոխանցել տուժած (affected) պետություններին: Այսպիսով՝ Կոնվենցիան սահմանում է Կոնվենցիային միացած պետություններին, ինչպես նաև ՄԱԿ-ի գխավոր քարտուղարին վարձկանության հանցագործության կատարման վերաբերյալ տեղեկատվության փոխանցման ընթացակարգ:
- Կոնվենցիայի 17-րդ հոդվածը սահմանում է, որ Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ կողմերի միջև այնպիսի վեճի առկայության պարագայում, որը չի լուծվում բանակցությունների միջոցով, կողմերից մեկի պահանջով ներկայացվում է արբիտրաժի: Եթե արբիտրաժի պահանջ ստանալու օրվանից վեց ամսվա ընթացքում կողմերը չեն կարողանում համաձայնության գալ արբիտրաժի կազմակերպման շուրջ, ապա այդ կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի (International Court of Justice) Կանոնադրությամբ սահմանված ընթացակարգով վեճը փոխանցել Արդարադատության միջազգային դատարանին: Այսինքն՝ Կոնվենցիայի 17-րդ հոդվածը ամրագրում է Կոնվենցիայի դրույթների խախտման պարագայում ինչպես միջազգային արբիտրաժի, այնպես էլ ունի ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարան դիմելու ընթացակարգ:

Կոնվենցիային միացած մի շարք պետություններ կատարել են վերապահումներ կոնվենցիայի դրույթների կիրառման վերաբերյալ, որին կարելի է ուշադրություն դարձնել: Օրինակ, Կուբայի Հանրապետությունը, Մոլդովայի Հանրապետությունը, Սաուդյան Արաբիայի Թագավորությունը, Սիրիայի Արաբական Հանրապետությունը, Վենեսուելայի Բոլիվարական Հանրապետությունը կատարել են վերապահում, ըստ որի՝ նշված պետությունները չեն ճանաչում ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի պարտադիր իրավասությունը և կոնվենցիայով սահմանված վեճերի լուծման այլ ընթացակարգերը: Համաձայն Բելգիայի Թագավորության կատարած վերապահման՝ «Կոնվենցիայի որևէ դրույթ չպետք է մեկնաբանվի որպես փոխադարձ դատական

[2] https://ap.ohchr.org/documents/dpage_e.aspx?si=A/HRC/42/L.8:

օգնության պարտականություն, եթե արտահանձման հարցում ստացած պետությունը հիմք ունի հավատալու, որ հարցումը ներկայացվել է անձի էթնիկ ծագման, դավանանքի, ազգության կամ քաղաքական հայացքների հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու կամ անձին պատժելու նպատակով: Կոնվենցիայի որևէ դրույթ չպետք է մեկնաբանվի որպես Բելգիայի կողմից իր քաղաքացիներին արտահանձնելու պարտավորություն»:[3] Կոնվենցիան վավերացնելիս Ադրբեջանի Հանրապետությունն որևէ վերապահում չի կատարել:

Կարևոր է վկայակոչել Առաջին լրացուցիչ արձանագրության 47-րդ հոդվածը և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի սովորութային միջազգային մարդասիրական իրավունքի հետազոտության 108 կանոնը, ըստ որոնց՝ վարձկանները չունեն մարտիկի (կոմբատանտի) կամ ռազմագերու կարգավիճակ ստանալու իրավունք: Կոնվենցիան նաև արտացոլում է միջազգային մարդասիրական իրավունքի դրույթը առ այն, որ վարձկանները կարող են քրեական պատասխանատվության ենթարկվել միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտումների համար, ինչպիսիք են՝

- կանխամտածված սպանությունը,
- խոշտանգումները կամ անմարդկային վերաբերմունքը,
- դիտավորյալ մեծ տառապանքներ պատճառելը,
- առողջությանը լուրջ վնասվածք պատճառելը,
- ռազմական անհրաժեշտությամբ չարդարացված գույքի մեծածավալ ոչնչացումը և յուրացումը:[4]

Վերջին իրադարձություններով պայմանավորված, որով Արցախի և ողջ հայության դեմ պայքարում թուրքական և ադրբեջանական իշխանությունները ներգրավել են Սիրիայից, Լիբիայից, Իրաքից, ինչպես նաև Պակիստանից և Աֆղանստանից վարձկանների, անհրաժեշտություն է առաջացել Հայաստանի Հանրապետության՝ վարձականության դեմ պայքարում միջազգային հանրության ջանքերին միանալու: Վարձականներին զինված հակամարտությունների ժամանակ օգտագործելու արգելքը ինչպես միջազգային պայմանագրային իրավունքի, այնպես էլ միջազգային սովորութային իրավունքի կանոն է: Վավերացնելով Կոնվենցիան Հայաստանի Հանրապետությունը ոչ միայն կվերահաստատի զինված հակամարտությունների ժամանակ վարձկանների օգտագործման անթույլատրելիության վերաբերյալ իր դիրքորոշումը, այլև հնարավորություն կունենա դիմել և օգտվել այդ Կոնվենցիայով նախատեսված իրավական պաշտպանության ու կանխարգելման մեխանիզմներից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է Կոնվենցիայի վավերացումը՝ որպես վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման և ուսուցման դեմ պայքարին միանալուն գործընթաց:

---

[3] https://treaties.un.org/Pages/ViewDetails.aspx?src=IND&mtdsg_no=XVIII-6&chapter=18&clang=_en:

[4] 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիա պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին, հոդված 147, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=20872 // https://www.icrc.org/en/doc/resources/documents/misc/57jp2a.htm // https://guide-humanitarian-law.org/content/article/3/mercenaries/: